ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԳԵՎՈՐԳ
Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ՀՀ պետական վերահսկողական ծառայության իրավախորհրդատու

ISRAYELYAN GEVORG
Candidate of Legal Sciences, Associate Professor,
Legal Advisor at the State Supervision Service of the RA

ИСРАЕЛЯН ГЕВОРГ
Кандидат юридических наук, доцент,
юридический консультант Службы государственного контроля РА

ՄԿՐՏԻՉՅԱՆ ԱՆՆԱ
ՀՀ արդարադատության ակադեմիայի համագործակցության և հանրային կապերի բաժնի ղեկավար, Երևանի պետական համալսարանի տպագիր և հեռարձակվող լրատվամիջոցների ամբիոնի դասախոս

MKRTICHYAN ANNA
Lecturer at Chair of Printed and Broadcasting Mass Media of Yerevan State University,
Head of the Unit of Cooperation and Public Relations at the Academy of Justice

МКРТИЧЯН АННА
Руководитель отдела сотрудничества и общественных связей Академии юстиции Республики Армения, Преподаватель кафедры печатных и транслируемых СМИ Ереванского государственного университета

ՄԵԴԻԱՅԻ ԴԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԲՆԱԿԱՆ ԼԱՏԵՆՏԱՅԻՆ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ*

THE ROLE OF MEDIA IN THE ORGANIZATION OF PREVENTION OF NATURAL LATENT CRIMINALITY IN THE REPUBLIC OF ARMENIA*

РОЛЬ МЕДИА В ПРОЦЕССЕ ОРГАНИЗАЦИИ ПРЕДУПРЕЖДЕНИЯ ЕСТЕСТВЕННОЙ ЛАТЕНТНОЙ ПРЕСТУПНОСТИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ*

Հասարակական կյանքում տեղ գտնող ճգնաժամային փոփոխությունները, ինչպես նաև համաշխարհայնացման գործընթացում Հայաստանի Հանրապետության ներգրավվածությունը հանգեցնում են ոչ միայն լատենտային հանցավորության աճի, այլև որակական փոփոխությունների: Այս առումով մեդիան կարող է անգնահատելի դերակատարում ունենալ լատենտային հանցավորության կանխարգելման կազմակերպման գործընթացում: Խնդիրն այն է, որ զանգվածային լրատվության միջոցները հասարակական գործընթացների կառավարման կարևոր գործիքներից են: Չափազանց մեծ է դրանց նշանակությունը հասարակության իրավական դաստիարակության և իրավական գիտակցության ձևավորման գործում: Մամուլը, ռադիոն, հեռուստատեսությունը և շարունակաբար աճող լսարան ունեցող համացանցը՝ այդ թվում սոցիալական մեդիան, ներգործում են մարդու գիտակցության հուզական, ռացիոնալ, կամային կողմերի վրա և այդ կերպ կողմնորոշում մարդուն սոցիալական գործունեության մեջ, ներազդում նրա վարքագծի վրա[1]:

* Հոդվածը ներկայացվել է 07.02.2020, գրախոսվել է 24.03.2020, ընդունվել է տպագրության 06.04.2020:
* The article was presented 07.02.2020, was reviewed 24.03.2020, was accepted to publication 06.04.2020.
* Статья представлена 07.02.2020, рецензирована 24.03.2020, принята в печать 06.04.2020.

[1] Տե՛ս նաև Кержнер М.Ю. Профилактика правонарушений средствами массовой информации. ТВШ МВД СССР, Ташкент, 1975, էջեր 8-12:

Բնական լատենտային հանցավորության կանխարգելումը դրա պատճառական համալիրում ընդգրկված գործոնների հայտնաբերման և վերացման (չեզոքացման) նպատակաուղղված գործունեությունն է: Այս գործունեության օբյեկտ են հանցագործությունների մասին չհայտնող անձինք: Բնական լատենտային հանցավորության կանխարգելման կազմակերպման հարցում անհրաժեշտ է օգտագործել մեդիայի հնարավորությունները[1]: Քննարկվող ուղղությամբ, մեր կարծիքով, անհրաժեշտ է իրականացնել ստորև նկարագրվող գործողությունները:

1. Ամբողջ բնակչության իրավագիտակցության մակարդակի բարձրացում՝ կիրառելով քարոզչական միջոցներ, որոնք կնպաստեն քաղաքացիական հասարակության ձևավորման և բնակչության սոցիալական ակտիվության բարձրացման գործընթացներին:

2. Մեդիայի միջոցով իրավական գաղափարախոսության կառուցում, որում մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը պետք է լինի բարձրագույն արժեք: Իրավական գաղափարախոսությունն իրավական հայացքների, սկզբունքների, հասարակության կամ դրա առանձին կառուցվածքային միավորների պահանջների համակարգված գիտական դրսևորումն է: Դա յուրահատուկ կողմնորոշիչ է, որին անհրաժեշտ է հետևել:

3. Հասարակության անդամների, սոցիալական խմբերի, պետական մարմինների նկատմամբ հասարակության կողմից հասարակական վերահսկողության ստեղծում և զարգացում: Հասարակական վերահսկողությունը գործընթաց է, որի օգնությամբ հասարակությունը, անհատները որոշում են իրենց գործողությունների կամ որոշումների ճշտությունը, դրանց շտկման անհրաժեշտության առկայությունը կամ բացակայությունը: Հասարակական վերահսկողության կիրառումը կարող է դրականորեն ազդել այն հասարակության իրավագիտակցության և բարոյական վիճակի վրա, որում հանցագործությունների մասին չհայտնելը կքննադատվի հասարակության կողմից[2]: Հասարակական վերահսկողության կարևոր միջոցներ են զանգվածային լրատվության միջոցները:

4. Բնական լատենտայնության կանխարգելման համար անհրաժեշտ է խթանել քաղաքացիներին հանցավորության դեմ պայքարում համագործակցելու իրավապահ մարմինների հետ: Այս նպատակներով անհրաժեշտ է վերացնել իրավապահ մարմիններին չդիմելու այնպիսի պատճառը, ինչպիսին է հանցավորի կամ նրա մտերիմների կողմից հաշվեհարդար տեսնելու վախը: Գործուն նշանակություն ունի քրեական դատավարության մասնակիցների պաշտպանության միջոցների կիրառումը: Այստեղ հիմնական խոչընդոտ է հանդիսանում քաղաքացիների մեծամասնության չիմացությունն այդ ինստիտուտի գոյության մասին: Դա վերացնելու համար, մեր կարծիքով, անհրաժեշտ է քրեական դատավարության մասնակիցների պաշտպանության դրույթների լուսաբանումը զանգվածային լրատվության միջոցներով: Կարևոր նշանակություն ունի նաև հանցագործության մասին տեղեկատվություն հայտնելու համար նյութական խրախուսման միջոցների հաճախակի կիրառումը:

5. Հանցավորության բնական լատենտայնության նվազեցման համար կարևոր է այնպիսի գործոնի չեզոքացումը, ինչպիսին է իրավապահ մարմիններին չդիմելը՝ պատճառված վնասը չնչին համարելով: Այս ուղղությամբ անհրաժեշտ է ծավալել նպատակաուղղված իրավական քարոզչություն՝ օգտագործելով զանգվածային լրատվության միջոցներների հնարավորությունները: Այդ առումով հարկ է նկատել, որ հասարակության մեջ իրավական քարոզչությունը համարվում է քարոզչության տեսակ՝ քաղաքականի, բարոյականի, տնտեսականի և այլնի շարքում[3]: Դրա

[1] Տե՛ս Кривенцов П.А. Латентная преступность в России: криминологическое исследование. Дисс. ... канд. юрид. наук. М., 2014, էջեր 127-128:

[2] Տե՛ս նույն տեղում, էջեր 127-130:

[3] Տե՛ս Бондарев А.С. Правовая пропаганда и обучение формы правового воспитания: понятие и средства воздействия // Вестник Пермского университета. Выпуск 1 (1), 2008, էջ 4:

շրջանակում իրականացվում է ազդեցություն անհատների գիտակցության վրա՝ նրանց մեջ իրավական գիտակցության և իրավական մշակույթի բարձր մակարդակ ձևավորելու նպատակադրմամբ:

6. Սոցիալ-քաղաքական ակտիվության, երկրում քրեաբանական իրադրության համար քաղաքացիների պատասխանատվության զգացման ձևավորումը ենթադրում է նրանց համոզմունքն առ այն, որ իրավասու մարմիններին հանցագործությունների (այդ թվում՝ ոչ մեծ ծանրության) մասին հայտնելն անհրաժեշտ է: Այդպիսի քարոզչության ազդեցության տակ պետք է ձևավորվի այն մասին համոզմունք, որ իրենց և այլոց շահերին ուղղված հանցագործությունների մասին տեղեկատվություն թաքցնելը հանցավորների մոտ օբյեկտիվորեն նպաստում է կայուն հակահասարակական ուղղվածության և հանցավոր գործունեությունը շարունակելու հնարավորության համոզվածության ձևավորմանը: Դա էլ հանգեցնում է հանցավորության ինքնավերարտադրությանը, տարածմանը, ինչը թույլ է տալիս ներթափանցել հասարակական կյանքի բոլոր ոլորտները՝ արդյունքում էապես վնասելով հասարակության անվտանգությանը: Այս նպատակներով անհրաժեշտ է բնակչության իրավագիտակցության և իրավական կուլտուրայի մակարդակի բարձրացումը, իրավապահ մարմինների հեղինակության ամրապնդումը: Հատկապես կարևոր է կոնկրետ հանցագործություններին հակազդելու միջոցների մասին բնակչության իրազեկումը: Այս խնդրի լուծման համար անհրաժեշտ է միջոցների համակարգ, որոնց կենսագործմանը կմասնակցեն ինչպես իրավապահ մարմինները, այնպես էլ քաղաքացիները[1]:

7. Հանցագործության մասին տեղեկատվություն հայտնելու կամ չհայտնելու հարցը լուծելիս կարևոր է իրավապահ մարմինների գործունեության արդյունավետության անհատական գնահատականը: Դա է բացատրում երբեմն հանդիպող այն փաստերը, երբ տուժողները կամ նրանց մտերիմները փորձում են ինքնուրույն հայտնաբերել հանցավորին: Իրավապահ մարմինների գործունեության արդյունավետության հանդեպ թյուրահավատության հաղթահարումը կարող է դրսևորվել իրավապահ մարմինների գործունեության արդյունավետության անհատական գնահատականի որակական փոփոխությամբ: Ընդ որում, պետք է նկատի ունենալ, որ զանգվածային լրատվության միջոցներով ցանկացած քարոզչություն, առանց հանցավորության դեմ պայքարի իրական ակտիվացման, միայն կվատթարացնի հասարակության վերաբերմունքն իրավապահ մարմինների նկատմամբ: Ուստի պետք է համադրվեն իրավապահ մարմինների գործունեության արդյունավետության բարձրացման և այդ մասին բնակչության իրազեկման աշխատանքները: Մարդու հոգեբանությունը ոչ միայն կախված է իրավապահ մարմինների գործունեության արդյունավետությունից, այլև դրա մասին տեղեկացումից: Գրագետ լուսաբանումը, իրավապահ մարմինների աշխատակիցների աշխատանքի ճիշտ ներկայացումը կարող են վստահություն ձևավորել ոչ միայն առանձին անհատների, այնպես էլ ոլորտի վերաբերյալ: Որքան բարձր է իրավապահ մարմինների նկատմամբ բնակչության վստահությունը, այնքան թուլանում են բնական լատենտայնությունը պայմանավորող գործոնների ազդեցությունը: Միաժամանակ անհրաժեշտ է իրավապահ մարմինների կողմից լուրջ քարոզչական աշխատանք տանել, որը կնպաստի քաղաքացիների իրավական գրագիտության մակարդակի բարձրացմանը, ինչը թույլ կտա ճիշտ գնահատական տալ հանցավոր ոտնձգություններին[2]:

Այսպիսով, բնական լատենտայնության կանխարգելման հիմնական ուղղություններն են.

- բնակչության իրավագիտակցության մակարդակի բարձրացումը,
- հասարակական հսկողության մեխանիզմների ստեղծումն ու զարգացումը,
- տուժողների և վկաների պաշտպանության արդյունավետ միջոցների մշակումը, իրականացումը և դրանց մասին բնակչությանն իրազեկումը,

[1] Տե՛ս Кривенцов П. А., նշված աշխ., նույն տեղում:
[2] Տե՛ս նույն տեղում:

– հանցագործության մասին տեղեկատվություն տրամադրող անձանց հետ փոխհարաբերությունների մեխանիզմի կատարելագործումը,
– վստահության կապի հնարավորության ստեղծումը, որը թույլ կտա հանցագործությունների մասին ստանալ տեղեկատվություն և այլն:

Հանցավորության լատենտայնության կանխարգելման գործում արդյունավետ է վիկտիմոլոգիական մոտեցումը: Այն ենթադրում է հանցագործության տուժող դարձած, սակայն այդ մասին չհայտնած անձանց ուսումնասիրություն: Ուսումնասիրվում է որոշակի անձանց՝ իրենց հանդեպ կատարված հանցագործությունների մասին չհայտնելու նախատրամադրվածությունը: Այս մոտեցման էությունը լատենտային հանցավորության վրա անմիջականորեն ազդող վիկտիմոլոգիական գործոնների վերլուծության միջոցով հանցավորության այդ մասի դեմ պայքարն է: Այդ մոտեցման համաձայն՝ լատենտային տուժողներ են այն անձինք, ովքեր չեն հայտնել հանցագործության մասին կամ որոնց վնաս հասցնելը սխալաբար չի համարվել հանցավոր: Լատենտային տուժողների ուսումնասիրությունը թույլ է տալիս հնարավորինս ամբողջականորեն հասկանալ հանցավորության բնական լատենտայնության պատճառները, պարզել այն գործոնները, որոնք հիմնական ազդեցություն են ունենում հանցագործության մասին իրավապահ մարմիններին հայտնելու կամ չհայտնելու որոշման կայացման վրա, ինչի արդյունքում կառուցել կանխարգելիչ միջոցների համակարգ, բացահայտել հանցագործության մասին չհայտնելուն առավել հակված մարդկանց խմբերը: Բացի այդ, դա թույլ է տալիս գալ այն եզրակացության, որ լատենտային հանցավորության նվազեցման համար էական նշանակություն կարող է ունենալ իրավական քարոզչությունը՝ օգտագործելով վիկտիմոլոգիական հետազոտությունների տվյալները: Քաղաքացիների սոցիալ-քաղաքական ակտիվության, երկրում իրավակարգի դրության համար պատասխանատվության զգացման ձևավորումը ենթադրում է նրանց նկատմամբ ներգործություն, որի նպատակն է նրանց մոտ ձևավորել նախապատրաստվող և կատարված հանցագործությունների մասին իրավասու մարմիններին դիմելու համոզմունք: Երբեմն քրեական գործով վարույթի ընթացքում լատենտային տուժողները փորձում են խոչընդոտել իրականության պարզմանը՝ ակնհայտ սուտ ցուցմունք տալու միջոցով, քանի որ շահագրգռված չեն դառնալու վարույթի մասնակից: Դա կարող է պայմանավորված լինել նրա նախորդող հակաիրավական վարքը բացահայտվելու կամ հանցանքի դեպքը հրապարակվելու վախով: Վիկտիմոլոգիական գործոնների վերլուծության միջոցով լատենտայնության դեմ պայքարի հիմնական ուղղություններից մեկը նշված խնդրի լուծումն է: Դրա համար պահանջվում է սոցիալական և իրավական տարբեր նորմերի իրագործում, որոնք ուղղված են տուժողների մոտ օրենքները և բարոյականության նորմերը հարգելու և պահպանելու անհրաժեշտության զգացման ձևավորմանը[1]:

Ամփոփելով վերոգրյալը՝ նշենք, որ մեդիայի տեղեկատվական հնարավորությունների օգտագործումն անկասկած արդյունավետ կլինի բնական լատենտային հանցավորության կանխարգելման աշխատանքները կառուցելիս, քանզի հասարակության վրա ներգործության միջոցներից ոչ մեկը չի կարող համեմատվել զանգվածային լրատվության միջոցների հետ՝ լսարանի միաժամանակյա ներգրավման ծավալներով: Բնական լատենտային հանցավորության կանխարգելմանն ուղղված բոլոր գործողությունների առանցքում իրավական գիտակցության բարձրացումն է, իրավական մշակույթի և իրավական գաղափարախոսության ձևավորումը, հասարակական վերահսկողության կիրառումը: Նշյալ բոլոր դեպքերում մենք անառարկելիորեն գործ ունենք մեդիայի և նրա ընձեռած հնարավորությունների և գործիքակազմի, ինչպես նաև ազդեցության հետ: Այդ առումով մեդիագրագիտության մակարդակի բարձրացումը, մեդիա բովանդակության վերանայումը հանցավոր վարքագծի վրա բացասական ներգործությունների

[1] Տե՛ս նույն տեղում, էջեր 128-137:

կանխարգելման համար արժեքավոր և խիստ դրական կարող է լինել: Ուստի անհրաժեշտ է ակտիվացնել զանգվածային լրատվության միջոցներով հայրենասիրական, բարոյագիտական և այլ դրական կողմնորոշման թեմատիկայով դաստիարակչական բնույթի նյութերի տարածումը: Դա կնպաստի հասարակության մեջ բարոյահոգեբանական մթնոլորտի առողջացմանը, բնակչության իրավագիտակցության մակարդակի բարձրացմանը, համապատասխան հասարակական կարծիքի ձևավորմանը, արդյունքում՝ բնական լատենտային հանցավորությունը պայմանավորող գործոնների չեզոքացմանը կամ վերացմանը:

Annotation: The measures of prevention of natural latent criminality are based on increasing legal awareness, formation of a legal culture and legal ideology, and the application of public control. In the process of prevention of natural latent criminality, the media plays an important role, including its capabilities and tools, as well as its impact on the object of prevention. In this regard, increasing the level of media literacy, analysis of media content can be valuable and extremely positive to prevent negative effects on social behavior.

Аннотация: В основе мер предупреждения естественной латентной преступности лежат повышение правосознания, формирование правовой культуры и правовой идеологии, применение общественного контроля. В процессе предупреждения естественной латентной преступности важную роль играют средства массовой информации, их возможности и инструментарий, а также их воздействие на объект предупреждения. В связи с этим, повышение уровня медиаграмотности, анализ медиа контента может быть ценным и чрезвычайно позитивным для предупреждения негативного воздействия на общественное поведение.

Հիմնաբառեր՝ բնական լատենտային հանցավորություն, մեդիա, կանխարգելում, իրավագիտակցություն:

Key words: natural latent criminality, media, prevention, legal awareness.

Ключевые слова: естественная латентная преступность, медиа, предупреждение, правосознание.